

Մենք միավորում ենք աղետների ռիսկի նվազեցման ուղղված մեր ջանքերը հանուն կայուն ապագայի:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՈՒՆ

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-13, 2017թ.

ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ

RECOVERY

RISK
REDUCTION

MAN MADE

PUBLIC-PRIVATE PARTNERSHIP

HARDWA



Համաժողովի ընդհանուր նպատակն է զարգացնել աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) երկխոսությունը և իրազեկվածությունը Եվրոպայի և ԱՊՀ տարածաշրջանի երկրների միջև և անդին: Համաժողովը կնպաստի կայուն, ռիսկի գիտակցումով պայմանավորված ԱՌՆ գործողությունների իրականացման համար հիմնական դերակատարների քաղաքական հանձնառության ուժեղացմանը: Այն նաև կօգնի բարձրացնել Աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) ոլորտի պետական մարմինների իրազեկվածությունը, ներգրավվածությունն ու վերահսկողության կարողությունները, ինչպես նաև հնարավորություն կտա տարածաշրջանի մասնագետներին փոխանակել իրենց փորձը ԱՌԿ կառավարման, կրթության, նորարարական լուծումների և կարողությունների զարգացման ոլորտներում այդպիսով իսկ նպաստելով արդյունավետ պատրաստվածությանը, վաղ արձագանքմանն ու վերականգնմանը:



Որքան կառավարությունները,
ՄԱԿ-ի գործակալությունները,
կազմակերպությունները,
գործարար և քաղաքացիական
հասարակությունը լավ
հասկանան, թե ինչ է ռիսկը
և խոցելիությունը, այնքան
ավելի պատրաստված կլինեն՝
մեղմացնելու աղետները
և փրկելու ավելի շատ
մարդկային կյանքեր. ”

- ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՄԱՐ



ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ և ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Եվրոպայի և Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից երկրներն ունեն ավերիչ աղետների հարուստ փորձ, աղետներ, որոնք ողջ տարածաշրջանում առաջացրել են տնտեսական և մարդկային կորուստներ: Տարաշաշրջանում առկա են բնական և տեխնածին վտանգների գրեթե բոլոր տեսակները, այդ թվում՝ երկրաշարժեր, ջրհեղեղներ, սողանքներ, սելավներ, քարաթափումներ, ձնահյուսեր, երաշտներ և ծայրահեղ եղանակային պայմաններ: Երկրաշարժերն ամենավտանգավորն են խելով կյանքեր վնաս հասցնելով մարդկանց, շինություններին և ենթակառուցվածքներին՝ միաժամանակ առաջացնելով երկրորդային վտանգներ:
2. Եվրոպային և ԱՊՀ տարածաշրջանին սպառնում են նաև տեխնածին աղետներ, ինչպիսիք են պոչամբարների փլուզումը և վտանգավոր նյութերի արտանետումները: Հաճախ նման աղետներն անցնում են պետական սահմանները և գերծանրաբեռնում առանձին պետությունների՝ աղետների կառավարման կարողությունները: Տարածաշրջանի

երկրների մեծ մասի ֆինանսական միջոցները և ֆիզիկական դիմակայունությունը բավականին սահմանափակ են: Ավելին, երկրներում պատրաստվածության և կանխարգելման կարողությունները տարբեր են, իսկ տարածաշրջանային համագործակցությունը բավարար մակարդակում չէ:

3. Տարածաշրջանում աղետների ռիսկի մեծացմանը նպաստում են երկու կարևոր գործոն.
 - » Չկառավարվող ուրբանիզացիան: Սոցիալիստական դարաշրջանից հետո Եվրոպայի և ԱՊՀ երկրների մեծ մասը կենտրոնացված պլանավորված տնտեսական համակարգից արագ անցում կատարեցին դեպի շուկայական համակարգի: Արդյունքում, վերջինս հանգեցրեց գերարագ ապակենտրոնացման, սեփականաշնորհման և արագ քաղաքային փոփոխությունների: Փոփոխվող տնտեսական և սոցիալական միջավայրը էական Նոր ազդեցություն ունեցավ քաղաքաշինության վրա, երբ ուրբանիզացման միտումները փոխվեցին թե՛ թվաքանակի, և թե՛ աշխարհագրական առումներով:

» Կլիմայի փոփոխության պատճառով վերջին տարիներին մեծացել են հիդրոոդերևութաբանական երևույթների հաճախականությունը և ուժգնությունը (հեղեղումներ, երաշտներ, անսպասացում և փոթորիկներ): Քաղաքային բնակավայրերը հատկապես խոցելի են աղետների բացասական ազդեցությունների նկատմամբ: Հատկապես խոցելի են մայրաքաղաքները և մեծ քաղաքները, որտեղ տեղի են ունենում ինտենսիվ տնտեսական զարգացումներ և բազմազան միջոցառումներ: Շատ հաճախ այս ամենին ուղեկցում է բնակչության արագ աճը: Այս քաղաքներից շատերը խոցելի են երկրաշարժերի, և բոլորը՝ ջրհեղեղների նկատմամբ: Պարզ ռիսկի գնահատմամբ, որտեղ հաշվի են առնվում վտանգների գոտիավորումը և քաղաքների բնակչությունը, երկրաշարժերը համարվում են մինչ այժմ ամենամեծ ռիսկը, մինչդեռ ջրհեղեղների և սողանքների ռիսկերն ավելի պակաս էական են համարվում:

4. Վերոնշյալ մարտահրավերների լուծումը աղետների ռիսկի նվազեցումը (ԱՌՆ) և կառավարումն է: ԱՌՆ-ը, ժամանակակից մեկնաբանմամբ, մարդկային անվտանգության

համապարփակ համակարգ է, որտեղ համատեղվում են վերևից ներքև պաշտպանությունը և ներքևից վերև հնարավորությունների/ կարողությունների ստեղծումը: Այն իրականացվում է կայուն զարգացման և աղետների ռիսկի նվազեցման գործընթացներում ներգրավված բոլոր պետական և հասարակական մարմինների միջև հորիզոնական և ուղղահայաց համագործակցությամբ: ԱՌՆ նպատակն է պաշտպանել մարդկանց, նրանց առողջությունը, արդյունաբերական, մշակութային և բնապահպանական ունեցվածքը և արժեքները բնական և մարդածին վտանգավոր երևույթներից և աղետներից: Այս նպատակների իրագործման համար ԱՌՆ Սենդայի 2015-2030թթ. գործողությունների ծրագրով առաջադրվել են մի շարք համալիր միջոցառումներ, որոնք ներառում են՝ աղետների ռիսկի հատկորոշում և չափորոշում, կրթության միջոցով գիտելիքի ավելացում, իրազեկվածության բարձրացում, հաստատութենական և օրենսդրական հենքի հզորացում, ֆինանսական պաշտպանվածություն և բազմոլորտ կանխարգելման պլանավորում, և այլն:

5. Աղետների ռիսկերի արդյունավետ նվազեցման համար անհրաժեշտ են նոր մոտեցումներ, գործիքներ, հմտություններ և կարողություններ,



որը հիմք կհանդիսանա մեծացնելու հանրային պահանջարկը և քաղաքական հանձնառությունը՝ տեղական մակարդակում գործողությունների իրականացման և բյուջետային հատկացումների համար:

» Եվրոպական և ԱՊՀ երկրներում ԱՌՆ գործողությունների իրականացման ընթացքում հանդիպող հիմնական մարտահրավերներն են պատշաճ տեխնիկական կարողությունների և կառավարության հանձնառության պակասը, և ԱՌՆ-ը կառավարությունների ավելի ընդլայնված քաղաքականություններում ներառելու շուրջ տարվող պայքարը:

» Ընդհանուր առմամբ, որպեսզի կառավարություններն ու համայնքները դառնան ավելի դիմակայուն բնական, տեխնածին և բնապահպանական վտանգների հանդեպ, անհրաժեշտ է ունենալ՝

- ^ Իրազեկվածություն բոլոր հնարավոր վտանգների ռիսկերի մասին:
- ^ Ռիսկի նվազեցման հանձնառություն մարդկանց նկատմամբ, բոլոր մակարդակներում հանրության մասնակցություն և ռիսկի գիտակցումով պայմանավորված դիմակայուն

զարգացում (պլանավորում, իրականացում, գնահատում և վերանայում):

^ Հասարակության տարբեր ոլորտների միջև ընդլայնված գործընկերություն և ռիսկի նվազեցման ցանցեր:

6. Աղետների ռիսկի նվազեցումը և կառավարումը 2030թ. զարգացման օրակարգում կենտրոնական տեղ է զբաղեցնում: Մասնավորապես՝

» Կայուն զարգացման 2030թ. օրակարգում ճանաչվում և վերահաստատվում է աղետների ռիսկի նվազեցման հրատապությունը: Աղետների ռիսկի նվազեցման խնդիրները արտացոլված են տարբեր Կայուն զարգացման նպատակներում (ԿԶՆ): Տասնյոթ ԿԶՆ-երից 10-ում ներկայացված է 25 թիրախ՝ կապված աղետների ռիսկի նվազեցման հետ, որոնք ամրապնդում են աղետների ռիսկի նվազեցման դերը՝ որպես հիմնական զարգացման ռազմավարություն:

» Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի շրջանակային ծրագրի առաջնահերթ ուղղությունները և 13 ուղղորդիչ սկզբունքները կոչ են անում արտակարգ իրավիճակներում ավանդական արձագանքման և վերականգնողական

գործողությունները վերափոխել ռիսկի գիտակցումով պայմանավորված կայուն զարգացմամբ: Վերջինիս նպատակն է ԱՌՆ-ը դարձնել զարգացման գործընթացների կենտրոնական գործառույթ և շեշտադրել համայնքների և կառավարման դիմակայունությունը, մահացության մակարդակի և վնաս կրած մարդկանց թվի նվազեցումը, տնտեսական կորուստների և կարևոր նշանակության ենթակառուցվածքների վնասի նվազեցումը, ԱՌՆ ազգային պլատֆորմ ձևավորած երկրների քանակի ավելացումը և երկրներում հատուկ աղետների ռիսկի կառավարման ռազմավարությունների առկայությունը:

» 2017թ. ԱՌՆ գլոբալ պլատֆորմը հատուկ կերպով ընդգծեց Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի շրջանակային ծրագրի 4 առաջնային ուղղությունների նկատմամբ կանոնավոր հաշվետվողականության կարևորությունը և ԿԶՆ-երի ընդհանուր ծրագրում հատկորոշեց լրացուցիչ առաջնահերթություններ, ինչպիսիք են՝ Սենդայի գործողությունների ծրագրի իրագործման մշտադիտարկումը,

կայուն զարգացման և կլիմայի փոփոխության օրակարգերի հետ համատեղումը, միջազգային և պետական-մասնավոր ոլորտների համագործակցությունը և երկրների միջև կոալիցիայի ստեղծումը՝ կարևոր նշանակության ենթակառուցվածքների ոլորտում համագործակցության նպատակով:

7. Հաշվի առնելով տարածաշրջանում աղետների ռիսկերի նվազեցման հետ կապված մարտահրավերները և հիմնվելով Սենդայի և ԿԶՆ համընդհանուր ծրագրերի վրա՝ սույն համաժողովի նպատակն է լրացնել Եվրոպայի և ԱՊՆ երկրների միջև տարածաշրջանային երկխոսության և գործողությունների բացերը:
- » Համաժողովը կառուցված է ԱՌՆ մասնակիցների ընդգրկուն ցանցի հիման վրա, որին աջակցում են ՄԱԿ-ի աղետների ռիսկի նվազեցման գրասենյակը, ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը և գործում է այլ երկկողմ և բազմակողմ ձևաչափերով:
 - » Համաժողովում շարունակվելու է 2017թ. Մեքսիկայի Կանկուն քաղաքում տեղի ունեցած Գլոբալ պլատֆորմի ընթացքում սկիզբ առած երկխոսությունը, որտեղ հայաստանյան պատվիրակությունը հակիրճ



Ներկայացրեց Սենդայի գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացը, կապելով այն ԿԶՆ-երի հետ, ինչպես նաև ընթացիկ նախաձեռնությունները, որոնք ուղղակիորեն հասցեագրում էին Կանկունի Գլոբալ պլատֆորմի առաջնային ուղղությունները¹:

- » Այն հիանալի հնարավորություն է եվրոպայի և ԱՊՆ տարածաշրջանի բոլոր մասնակիցների համար՝ ներկայացնելու իրենց ազգային քաղաքականությունները, լավագույն փորձը և բացահայտված թերությունները, ինչպես նաև մասնակցել քննարկումների և փոխանակել երկրների կարևոր փորձը: Փորձի փոխանակման համար **համաժողովի կազմակերպիչներն ստեղծել են թեմատիկ քննարկումների հնարավորություններ, որոնք անցկացվելու են բաց և ստեղծագործական մթնոլորտում՝ վերոնշյալ նպատակին հասնելու համար:**

8. Ինչո՞ւ Հայաստանում

- » Հայաստանում արդյունավետորեն գործում է 2010թ. հիմնադրված ԱՌՆ Ազգային պլատֆորմը, որը համակարգման մեխանիզմ է՝ ուղղված բազմոլորտ համագործակցության հզորացմանը և ԱՌՆ միջոցառումների կայունության ապահովման համակարգմանը, որն իրականացվում է խորհրդակցական և մասնակցային գործընթացների միջոցով՝ Կայուն զարգացման նպատակներին և ԱՌՆ Սենդային գործողությունների ծրագրին համահունչ:
- » ԱՌՆ Սենդայի գործողությունների ծրագրի և ԿԶՆ-երի մասին իրազեկվածությունը և պատկերացումը հիմք է հանդիսացել 2017թ. մարտին ընդունված Հայաստանի աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության մշակման համար, և լայնորեն ներկայացվում է մասնագիտական կարողությունների զարգացման նախաձեռնություններում:

¹ Դրանք են՝ ԱՌՆ Սենդայի գործողությունների ծրագրի իրականացման մշտադիտարկում, աղետների ռիսկի նվազեցման ազգային և տեղական ռազմավարություններ ունեցող երկրների թվաքանակի ավելացում, կայուն զարգացման և կլիմայի փոփոխության օրակարգերի հետ կապակցվածություն, գենդերային առումով զգայուն և ներառական աղետների ռիսկի նվազեցում և միջազգային, այդ թվում՝ պետական –մասնավոր ոլորտների համագործակցության նախաձեռնություններ: Այս առումով, Հայաստանն ունի զգալի ձեռքբերումներ, որոնք արդյունավետ հիմք կհանդիսանան խորացված համագործակցության համար:

Այն ընդգծում է ԱՌԿ ապակենտրոնացումը, քաղաքականության մշակման, հանրային կառավարման և արագ արձագանքման համապատասխան կարողությունների զարգացումը, դպրոցների համապարփակ անվտանգությունը և ԱՌՆ ներառումը կրթական համակարգում, ինտեգրված ժամանակակից վաղ ազդարարման համակարգերի անհրաժեշտությունը և ընդհանուր ԱՌԿ մշտադիտարկման մեթոդաբանության մշակումը՝ որպես հետագա զարգացման հիմնական առաջնային ուղղություններ:

» Հայաստանն արդեն նախաձեռնել է ԱՌՆ Սենդայի գործողությունների ծրագրի իրականացման մշտադիտարկման և գնահատման գործընթացների մշակումը և ԱՌԿ ոլորտում մասնավորապես տական ոլորտների գործակցության կազմակերպումն ու համակարգումը՝ արդյունավետորեն գործող թեմատիկ խմբերի միջոցով և ՄԱԿ-ի աղետների ռիսկի նվազեցման գրասենյակի հետ սերտ համագործակցությամբ և Եվրոպական հանձնաժողովի մարդասիրական օգնության

վարչության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ:

» Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցել դպրոցների անվտանգության համապարփակ մոտեցման ներդրման և հաստատութենական հիմքերի վրա դնելու ուղղությամբ, ինչպես նաև իր ներդրումն է ունեցել Անվտանգ դպրոցների ապահովման համաշխարհային նախաձեռնության մեջ, որի նպատակն է պաշտպանել աշակերտներին և կրթության ոլորտի աշխատողներին, պլանավորել ուսման շարունակականությունը անսպասելի վտանգների ժամանակ, ապահովագրել կրթության ոլորտի ներդրումները և հզորացնել կլիմայի առումով զգայուն աղետների դիմակայունությունը կրթության միջոցով:

Հիմնվելով վերոնշյալ ձեռքբերումների վրա և հստակ արժեքավորելով փորձի փոխանակման հնարավորությունը, Հայաստանն առաջարկում է տարածաշրջանային երկխոսության հարթակ՝ այդպիսով իր ներդրումը կատարելով համընդհանուր գիտելիքի փոխանակման և ԱՌՆ ոլորտում «հարավ-հարավ» համագործակցության ոլորտում:



Սույն համատեքստում, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը և ՄԱԶԾ-ը, ՄԱԿ-ի ԱՌՆ գրասենյակի, ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության մշտական հանձնաժողովի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, Եվրոպական հանձնաժողովի մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության հարցերով գլխավոր վարչության, Ասիական տեխնոլոգիայի ինստիտուտի, Սեյվ դը Չիլդրենի, Օքսիջենի, Հաբիթաթի, Հայկական կարմիր խաչի ընկերության և Հայաստանի աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմի հետ գործընկերությամբ և տեղական և միջազգային ԱՌՆ գործընկերների հետ սերտ համագործակցությամբ նախաձեռնել է «Դիմակայունություն հանուն կայուն զարգացման» եռօրյա միջազգային համաժողովի անցկացումը Երևան քաղաքում:

Ամսաթիվը՝

Հոկտեմբերի 11-13, 2017թ.

Վայրը՝

- » Օր 1-2 – ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ (Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ) համաժողովների դահլիճ: Հասցե՝ Մաշտոցի պողոտա 2ֆ, Երևան, Հայաստանի Հանրապետություն:
- » Օր 3 – ՀՀ ազգային ժողով (հասցե՝ Բաղրամյան 19, Երևան, Հայաստանի Հանրապետություն):

Համաժողովի աշխատանքային լեզուն՝

- » **կիրականացվի անգլերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն լեզուներով համաժամանակյա թարգմանություն:**

Հիմնական կազմակերպիչները՝

- » ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
- » ՄԱԿ-ի զարգացման ծրագիր (ՄԱԶԾ)
- » Հայաստանի Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ

Գործընկերները՝

- » ՄԱԿ-ի աղետների ռիսկի նվազեցման գրասենյակ (UNISDR)
- » ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF)
- » Եվրոպական հանձնաժողովի մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության հարցերով գլխավոր վարչություն (DG ECHO)
- » Ասիական տեխնոլոգիայի ինստիտուտ
- » Սեյվ դը Չիլդրեն միջազգային կազմակերպության հայաստանյան ներկայացուցչություն
- » Երիտասարդների եւ կանանց իրավունքների պաշտպանության «Օքսիջեն» հիմնադրամ
- » Հաբիթաթ ֆոր Հյուսնեհիթի Արմենիա
- » Հայկական կարմիր խաչի ընկերություն

Նախատեսված լսարանը՝

- » ԱՌԿ ոլորտի հանրային բարձրաստիճան պաշտոնյաներ և գլխավոր փորձագետներ ազգային օրենսդիր և գործադիր իշխանություններից, մարզային և քաղաքային կառավարություններից,
- » ԱՌՆ ոլորտում գործող միջազգային և տեղական կազմակերպությունների բարձրաստիճան ներկայացուցիչներ,
- » Եվրոպայի և ԱՊՆ մասնակից երկրների ՄԱԿ-ի ԱՌՆ մասնագետներ,
- » Ակադեմիական, ԱՌՆ կրթական և վերապատրաստման ինստիտուտների բարձրաստիճան պաշտոնյաներ, հիմնական մասնագետներ և հետազոտողներ,
- » Մասնակից երկրների այլ ԱՌՆ շահագրգիռ կողմեր:

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Համաժողովի ընդհանուր նպատակն է զարգացնել աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) երկխոսությունը և իրազեկվածությունը Եվրոպայի և ԱՊՆ տարածաշրջանում և նպաստել կայուն, ռիսկի գիտակցումով պայմանավորված ԱՌՆ գործողությունների իրականացման համար հիմնական դերակատարների քաղաքական հանձնառության հզորացմանը:

Եռօրյա համաժողովի նպատակն է՝

- » Աջակցել ՀՀ Ազգային ժողովի և այլ մասնակից երկրների իրազեկվածության բարձրացմանը և ներգրավվածությանը աղետների ռիսկի կառավարման գործընթացում:
- » Նշել Աղետների ռիսկի նվազեցման միջազգային օրը:
- » Հզորացնել ԱՌՆ քաղաքականության երկխոսությունը, զարգացումը և վերահսկողությունը:
- » Բարձրացնել ԱՌՆ կառավարման հասկացությունների և կիրառման իրազեկվածության մակարդակը և խորացնել ըմբռնումը:
- » Հատկորոշել տեղայնացված համատեքստային ձևաչափեր՝ ռիսկի գիտակցումով պայմանավորված զարգացման համար:
- » Քննարկել տարածաշրջանին հատուկ հանրային և մասնավոր ներդրումների ռիսկերի նվազեցման ձևաչափերը:
- » Բարձրացնել քաղաքական հանձնառությունը և սոցիալական պահանջը՝ կայուն, ռիսկի գիտակցումով պայմանավորված, աղետակայուն ոլորտային զարգացման համար՝ ուղղված ԱՌՆ արդյունավետ ինտեգրմանը զարգացման քաղաքականություններում, ծրագրերում և գործընթացներում:
- » Զարգացնել ԱՌՆ Սենդայի գործողությունների ծրագրի, Կայուն զարգացման նպատակների և Հայաստանի ԱՌԿ ազգային ռազմավարության տեղայնացման գործընթացը:
- » Ապահովել գիտելիքի տարածաշրջանային կառավարում և ԱՌԿ ուսուցման փոխանակում, դպրոցների համապարփակ անվտանգություն, նորարարական լուծումներ և փորձի փոխանակում կարողությունների զարգացման, ԱՌՆ կառավարման, պատրաստվածության, վաղ արձագանքման և վերականգնման ոլորտներում:
- » Ձևակերպել և համաձայնեցնել հետագա համագործակցության ձևաչափերը:



ԱԿՆԿԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ակնկալվող արդյունքներն են՝

1. Առաջարկություններ՝ ԱՌԿ քաղաքականության մշակման և վերահսկողության ոլորտում հորհրդարանի դերի ամրապնդման ուղղությամբ:
2. Առաջարկություններ՝ ԱՌՆ Սենդայի գործողությունների ծրագրին համահունչ Կայուն զարգացման նպատակների տեղայնացման վերաբերյալ:
3. ԱՌՆ ինտեգրման առաջարկություններ՝ պետական-մասնավոր ոլորտների գործընկերության, ԱՌՆ նորարարությունների և տարածաշրջանային (անդրսահմանային) համագործակցության և գործընկերության միջոցով:
4. Ոլորտային զարգացման ծրագրերում ԱՌՆ ինտեգրման գործնական մեթոդների առաջադրում:
5. Կրթական, գիտական, հանրային իրազեկման և հետազոտության զարգացման առաջարկություններ՝ դիմակայունության մշակույթի ամրապնդման համար:
6. Ձևակերպված առաջարկությունների իրականացման ձևաչափերի համաձայնեցում: